ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի նոյեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 48008.0 մլն դրամ՝ պլանավորված 47300.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.5 տոկոսով կամ 708.0 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 38.3 տոկոսով կամ 13295.3 մլն դրամով, որից 9701.6 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Նոյեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4003.6 մլն դրամ:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 121 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 8 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 86 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 36.7 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 18 ստուգում՝ 30.1 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգի» շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են վարձու աշխատողների չձևակերպման 47, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 20, ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման 3, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման 2, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման ու պակասորդի հայտնաբերման 1-ական դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 108 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 91-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 6-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 5-ը՝

ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման և 6 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 3 վարչական գործ՝ 40.0 հազ. դրամ գումարով, 1 քաղաքացիական հայց (սնանկության)՝ 44.9 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 4 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 7.4 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 94 վարչական գործով սահմանվել է շուրջ 2.4 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6168 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5630:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 37 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 81 վարձու աշխատողի՝ 11.4 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 49 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել են հարկային օրենքներում փոփոխություններ նախատեսող թվով 8 օրինագծեր, որոնք ուղղված են փոքր ու միջին ձեռնարկատիրության հարկային բեռի նվազեցմանը, որոշ ոլորտներում դրույքաչափերի օպտիմալացմանը և տույժերի ու տուգանքների գծով արտոնությունների սահմանմանը:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է 2019 թվականի հունվարի 1-ից գործողության մեջ դրվող եկամտային հաշիվների ցանկը, որով էականորեն կրճատվել է հարկերի, տուրքերի և բյուջե կատարվող այլ վճարումների համար նախատեսված եկամտային հաշիվների թիվը: Նախարարի հրամանով հաստատվել է նաև «Արցախի Հանրապետության տարածքում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար «Զ» սերիայի դրոշմապիտակի նմուշը և

տեխնիկական պահանջները», որը ԱՀ կառավարության որոշմամբ 2018 թվականի դեկտեմբերի 1-ից դրվել է կիրառության մեջ:

Նոյեմբեր ամսում ֆինանսների նախարարության ու աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի նախաձեռնությամբ հաշվապահական և հարկային հաշվառման թեմաներով կազմակերպվել են սեմինար-դասընթացներ, որոնց մասնակցել են արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող 70 հարկ վճարողների հաշվապահներ:

Հաշվետու ամսում հանդիպում է կազմակերպվել աշխատանքային այցով Արցախ ժամանած ՀՀ ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանի ղեկավարած պատվիրակության հետ, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ում և ԱՀ-ում իրականացվող բարեփոխումների հիմնական ուղղություններն ու դրանց ներդաշնակեցման ուղղությամբ հետագա քայլերը: Հանդիպման ընթացքում քննարկումներ են կազմակերպվել նաև Արցախում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման, էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման, Հայաստանի և Արցախի տնտեսավարող սուբյեկտների միջև կատարվող գործարքների մասով դուրս գրվող հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միասնական հարթակի ներդրման նպատակով ծրագրային ապահովումների և հարկային ոլորտին առնչվող այլ հարցերի շուրջ:

Նախարարության երկու աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ՊԵԿ ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, իսկ մեկ աշխատակից՝ Հայաստանի Հանրապետությունում կայացած Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (EECA) երկրներում BEPS-ի իրագործման համապարփակ համակարգին նվիրված 4-րդ տարածաշրջանային ժողովին:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև համագործակցության ծրագրի շրջանակում հաշվետու ամսում ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

«Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հաշվետու ամսում կայացել է հարկային ծառայողների հերթական ատեստավորում:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Նոյեմբերի 23-ին հարկային մարմնում կայացել է հարկային ծառայության «Գ» և «Դ» խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար փակ և բաց մրցույթների առաջին փուլը, որի արդյունքում հաղթող են ճանաչվել 2 դիմորդ՝ իրավունք ձեռք բերելով մասնակցելու մրցույթի բանավոր փուլին (հարցազրույցին), իսկ 12 դիմորդ հնարավորություն են ստացել մասնակցելու դեկտեմբերի 4-ին կրկնակի փակ և բաց մրցույթներին:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 200, ելքագրվել՝ 80 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն:

ՀՎՄՀՎԻԲ պետ **Ա. Մուսայելյան**